ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. **Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հետ կապված աշխատանքներ, մասնավորապես.**

   - Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման շրջանակում համակարգել եմ աշխատանքները, աջակցություն եմ տրամադրել ծրագիրը մշակող «Ամերիա» ՓԲԸ-ի թիմին, նախաձեռնել և կազմակերպել եմ հանդիպումներ թիմի և շահագրգիռ կողմերի միջև՝ ապահովելով աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և աշխատանքներին առնչվող որոշումների արագ կայացումը:

   - 2025թ. օգոստոսի 18-ին «Ամերիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ռազմավարական ծրագրի մշակման վերլուծական զեկույցի նախագծի առաջին տարբերակը, որից հետո ապահովել եմ նախագծի շրջանառումը համապատասխան ստորաբաժանումների միջև, ներկայացրել եմ դիտողություններ և առաջարկություններ նախագծի վերաբերյալ, ամփոփել ու կատարող թիմին եմ փոխանցել ստացված կարծիքները և կազմակերպել եմ հանդիպում կատարող թիմի հետ՝ ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների քննարկման նպատակով:

   - Աջակցել եմ կատարող թիմին վերլուծական զեկույցի մշակման շրջանակում նախաձեռնված բարձր տեխնոլոգիական ընկերությունների, աքսելերացիոն/ինկուբացիոն ծրագրերի, վենչուրային/բիզնես հրեշտակների ակումբների համար մշակված առցանց հարցաշարի տարածման և լրացման գործընթացին:

2. **«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի կիրարկումն ապահովող աշխատանքներ, մասնավորապես.**

- Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության թիմի հետ համագործակցությամբ՝ համակարգել եմ աշխատանքները՝ ապահովելու բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության 2025 թվականի 2-րդ եռամսյակի հայտերի առցանց ներկայացման և որոշ քայլերի թվայնացման գործընթացները: Մասնավորապես՝ մասնակցել եմ Ծառայությունների ազգային հարթակում և աջակցության հայտերի ներկայացման համապատասխան էջերում հրապարակվող տեղեկատվության բովանդակության մշակմանը, բիզնես պրոցեսների նկարագրման և գործընթացի օպտիմալացման աշխատանքներին, հանդիսացել եմ նախարարության կոնտակտային անձը՝ Գործակալության ծրագրավորման թիմին և ՊԵԿ-ի աշխատակիցներին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն, առաջարկություններ, դիտողություններ և պարզաբանումներ:

- Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում ապահովել եմ 2025թ. 2-րդ եռամսյակի պետական աջակցության հայտերի ներկայացման անխափան ընթացքի, լիազորագրերի էլեկտրոնային համակարգ մուտքագրման աշխատանքները, ինչպես նաև համակարգել եմ հայտերի ռեգիստրի ձևավորման և ամենօրյա թարմացման, հայտերի վարման, ստացված հայտերի առաջնային ստուգման աշխատանքները, կատարել եմ վիճակագրական վերլուծություններ, մշակել եմ գործընթացի վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր:

- Ապահովել եմ համագործակցությունը Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության և ՊԵԿ-ի պատասխանատուների հետ՝ նպատակ ունենալով 2025 թվականի 3-րդ եռամսյակից սկսած ապահովել պետական աջակցության հայտերի ընդունման, աջակցությունների չափի հաշվարկի և պայմանագրերի կնքման աշխատանքների լիարժեք ինքնաշխատ իրականացումը: Այս շրջանակում հաստատվել է պարբերական առցանց քննարկումների ռեժիմ՝ շաբաթական մի քանի անգամ Գործակալության թիմի և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

- Ներկայացրել եմ առաջարկություններ «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի և դրանից բխող այլ ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ՝ ուղղված կարգավորող նորմերի հստակության ապահովմանը, գործընթացների լավարկմանն ու համապատասխանեցմանը թվային օպտիմալ պրոցեսներին, իրավական բացերի վերացմանը և շահագրգիռ կողմերից ստացված առաջարկությունների հասցեագրմանը:

3. **Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների (R&D) աշխատանքները որպես այդպիսին որակելու աշխատանքների գործընթացին աջակցություն.**

- Կատարել եմ շահագրգիռ մարմինների, մասնավորապես, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ համագործակցության ապահովման, R&D աշխատանքները որպես այդպիսին որակելու 2025թ. 1-ին եռամսյակի հայտերի

ուսումնասիրման գործընթացի վերաբերյալ շահառուներին համապատասխան տեղեկատվության տրամադրման և այլ աջակցող աշխատանքներ:

4. **Համագործակցություն ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ.**

- Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ ոլորտի շահառու ասոցիացիաների և կազմակերպությունների հետ մի շարք առերես և առցանց հանդիպումների և քննարկումների:

5. **Այլ աշխատանքներ**

- Հավաքագրել, մշակել և նախարարության աշխատակիցներին տրամադրել եմ նրանց կողմից պահանջված տեղեկատվությունը:

- Պատասխանել եմ այլ պետական մարմիններից ստացված պաշտոնական գրություններին:

- Պատասխանել եմ ոլորտի կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ստացված գրավոր հարցումներին և դիմումներին:

- Պատասխանել եմ շահառու կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված հեռախոսազանգերին՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն:

- Կատարել եմ մի շարք այլ ընթացիկ աշխատանքներ:

ԲՏ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ _____ ԼՈՒՍԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ստորագրություն

«29» սեպտեմբեր 2025թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքները գնահատում եմ « գերազանց »

_____ ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ
անմիջական ղեկավարի ստորագրություն

«29» սեպտեմբեր 2025թ.